Պլպուլն արար սալամ վարդին.
Արեկ ւ իջնունք ի պաղչանին,
Ցորտեղ բուսեր է մանուշակ.
Ի յօն զարունք զվրանին:

Սուտ մանուշակն խնդիր ելաւ.
Գնաց ի յետ եւ նարկըզին,
Թէ զընայ ձայնէ ըղեհանն.
Զաղբերաց արիւն ու զղաղալին:

Հանին ծաղիկ իւրեանց միջին.
Ի մեծամեծքն յուղարկեցին,
Թէ զնայ ձայնէ զմուրդ ու չուշանն
Ու զնունուֆարն ի մէջ ջրին:

Ժողովեցան ցեղք ի ցեղաց.
Եւ գոյն ըզգոյն տերեւ սփռին,
Հաղար ըռանկ հալաւ հաղան.
Վարդն ւ պլպուլն ի տես դային:

Երնիկ ըզվարդն վըրանօքն նստած
Պլպուլն ի մէջ վրանին,
Էն բուրք հաղար ծաղկունքն ամեն.
Այն երկուսին խղմաթ կենին:

ԹՈՐՈՍ գովեր զվարդն ու ըզպլպուլն.
Որ ի սիրուն զամ կու քաշեն,
Զինչ հողածին կայր արարածս.
Որ չեր դիպեր այն պայային: (*)

Ինչպէս կը տեսնուի յիշատակարանի վերջին տան վերջի երկու տողերը հոս կը տարբերին Վիէննայի 398 թուի օրինակէն, որ դժբաղդաբար իր ամբողջութեան մէջ ինծի անծանօթ կը մնայ:

(*) Սաղէմի վանքին թիւ 3052 ձեռագրէն: